Նոր Կտակարանը լի է ցուցումներով այն մասին, թե ինչպես վարվել մարդկանց հետ: Դրանց թվում են մի շարք խոսքեր փոխհարաբերությունների վերաբերյալ, որոնք կոչվում են խոսքեր «իրար մասին»: Թեև այդ խոսքերը գեղեցիկ են հնչում, դրանք միշտ չէ, որ հեշտ է կատարել: Ահա որոշ գաղափարներ այն մասին, թե ինչպես ձեր խմբակի անդամները կարող են ապրել համաձայն «իրար մասին» խոսքերի:

His House Ministries ©

His House
MINISTRIES

Խմբակները մեր եկեղեցում թույլ են տալիս մեզ ապրել հավատքի կյանքով մեկս մյուսի հետ և այս աշխարհում. Այս ճշմարտապես աստվածաշնչյան ընկերակցությունն օգնում է մեզ ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին.
Բարեբախտաբար, Աստծո խոսքը շատ օրինակներ է բերում այն մասին, թե ինչպիսին պետք է լինի նման կյանք վերափոխող ընկերակցությունը: Խմբակը պատկերում է Աստծո եկեղեցին՝ Քրիստոսի ճշմարիտ մարմինը: Աղոթքով կարդացեք այս խոսքերն ,իրար մասինե և՛ ինքներդ ձեզ համար, և՛ այս շաբաթվա տնային խմբակում: Իսկ հետո պատրաստվեք, որպեսզի պատմեք, թե ինչպես է կարելի գործնականորեն կատարել այս խոսքերը մեր եկեղեցում (և թե ինչպես է կարելի գործնականորեն կատարել այս խոսքերը խմբակների միջոցով): Վերջապես, միասին աղոթեք, որ Աստված զորացնի մեզ Իր Հոգով, որպեսզի ապրենք այս սկզբունքներով.

HIS HOUSE MINISTRIES
T: (916) 717-8886
E: info@Hishouseofworship.org
W:HisHouseofworship.org

714 SMALL GROUP

hishouseofworship.org

13 ՄԻՔՈՑ «ԻՐԱՐ ՄԱՍԻՆ» ԽՈՍՔԵՐՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սիրեք, Ներեք, Ընդունեք, Նվիրվեք, Պատվեք, Բարի եղեք, Գթասիրտ եղեք, Լաց եղեք, Մխիթարեք, Ներդաշնակություն բերեք, Ողջունեք, Համաձայնվեք, Հնազանդվեք, Հյուրասիրություն առաջարկեք, Հաճեցրեք և Խաղաղություն ունեցեք մեկդ մյուսի հետ, ամեն խոնարհությամբ և Հեզությամբ, Համբերությամբ՝ ցուցաբերելով Ներողամտություն
մեկդ մյուսի հանդեպ Սիրով.

1. Տրտունջն անթույլատրելի է

«Իրար հետ խաղաղություն արեք» (Մարկոս 9.49):

«Մի հառաչեք իրար դեմ, եղբայրներ, որ չդատվեք» (Հակոբոս 5.9):

«Հյուրասեր եղեք իրար հետ՝ առանց տրտնջանքի» (Ա. Պետրոս 4.9)

2. Թույլ մի տվեք, որ կոնֆլիկտները բարդանան

«Իրար համբերելով և իրար ներելով» (Կողոսացիների 3.13):

«Եվ վերջապես ամենդ համամիտ, կարեկից, եղբայրասեր, բարեսիրտ, քաղցրաբարո եղեք» (Ա. Պետրոս 3.8):

3. Ձգտեք ծառայել մեկդ մյուսին

«Դուք էլ պետք է իրար ոտքերը լվանաք» (Հովհաննես 13.14):

«Իրար հնազանդ եղեք» (Եփեսացիների 5.21):

4. Անպայմանական սեր ցուցաբերեք

«Իրար սիրեք, ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհաննես 13.34):

«Սրանով կգիտենան ամենքը, թե Իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք» (Հովհաննես 13.35):

«Սա է Իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» (Հովհաննես 15.12):

«Իրար սիրեք» (Հովհաննես 15.17):
«Որովհետև դուք ինքներդ Աստծուց սովորած եք իրար սիրելու» (Ա. Թեսաղոնիկեցիների 4.9):

«Մաքուր սրտով իրար սերտ սիրեք» (Ա. Պետրոս 1.22):

5. Բարություն ցուցաբերեք

«Եղբայրասիրությունում իրար վրա գթած եղեք. պատիվ տալու մեջ իրար առաջ անցեք» (Հռոմեացիների 12.10):

6. Տվեք՝ առանց մարդկանց պարտավորեցնելու

«Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց» (Հռոմեացիների 13.8):

7. Հյուրընկալ եղեք այցելուների հանդեպ

«Ուրեմն, իրար ընդունեք, ինչպես Քրիստոսն էլ մեզ ընդունեց» (Հռոմեացիների 15.7):

8. Հյուրընկալ եղեք մնացած բոլորի հանդեպ

«Բարև տվեք իրար սուրբ համբույրով» (Հռոմեացիների 16.16):

9. Հոգ տարեք ընկճվածների համար

«Որ մարմնի մեջ տարաձայնություն չլինի, այլ որ անդամներն իրար համար նույն հոգսն ունենան» (Ա. Կոր.12.25):

«Սիրով ծառայեք իրար» (Գաղ. 5.13):

«Մնապարծ չլինեք՝ իրար գրգռելով և իրար վրա նախանձելով» (Գաղ. 5.26):

«Իրար բեռը վեր առեք» (Գաղ. 6.2):

«Ուրեմն իրար մխիթարեք այս խոսքերով» (Ա. Թեսաղոնիկեցիների 4.17):

10. Պատվեք Աստծուն ձեր խոսքով

«Նրա համար, դեն գցելով ստությունը, խոսեք ճշմարտությունն ամեն մարդ իր ընկերի հետ, քանի որ իրար անդամ ենք» (Եփեսացիների 4.25):

«Եվ իրար հետ քաղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ինչպես Աստված էլ Քրիստոսով ներեց ձեզ» (Եփեսացիների 4.32):

«Խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով» (Եփեսացիների 5.19):

«Սուտ մի խոսեք իրար հետ» (Կողոսացիների. 3.9):

«Որ կարող եք իրար խրատել» (Հռոմեացիների.15.14):

11. Ծփվեք իրար հետ հավաքույթների միջև

«Սրա համար իրար մխիթարեք և իրար շինություն տվեք» (Ա. Թեսաղոնիկեցիների 5.11):

«Իրար հորդորեք (կամ՝ խրախուսեք) ամեն մեկ օր» (Եբրայեցիների 3.13):

«Այսինքն, որ ձեզ հետ մխիթարվեմ մեր փոխադարձ՝ իմ և ձեր հավատքի միջոցով» (Հռոմեացիների. 1.12):

12. Պատրաստ եղեք օգնել իրար

«Եվ չթողնենք մեր իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորություն է, բայց իրար հորդորենք» (Եբրայեցիների 10.25):

13. Աղոթեք իրար համար

«Իրար խոստովանեք ձեր հանցանքները և իրար վրա աղոթք արեք, որ բժշկվեք» (Հակոբոս 5:16):